

ՆԵՄԵՍԻՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ

(Տես էջ 118)

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Յաղագս Տեսողականի :

Արդ՝ տեսողականն¹ է զօրութիւն տեսնութեան անձին՝ 'ի ձեռն զգայարանացն ներգործեալ, իսկ տեսականն՝ որ ընդ զգայութեամբն անկանի . որպէս զգայութիւն և զգալի : իսկ տեսութիւն է կիրք անբանութեան² անձին, 'ի տեսականէ իմեքէ եղեալ, իսկ տեսումն³ կիրք ցնորական յանբանութեան անձին, յոչ ումեքէ տեսականէ եղեալ :

Իսկ Ստոյիկեանքն՝ չորս ասեն զայսոսիկ . տեսութիւն, տեսական, տեսողական, տեսումն : Տեսութիւն ասեն զկիրս անձին՝ ցուցեալ յինքեան և զարարողն տեսական . քանզի յորժամ սպիտակ ինչ տեսանեմք՝ լինի կիրք իմն յանձինն յառմանէ նորա : Զի որպէս 'ի զգայարանս լինի կիրք յորժամ զգայ, ոյսպէս և անձին՝ յորժամ զմտաւածէ . քանզի պատկեր իմն ընդունի յինքեան զիմացականին : — իսկ տեսական՝ զարարողն զտեսութիւն զգալի, որպէս զսպիտակն և ամենայն որ ինչ կարէ շարժել զանձն : — իսկ տեսողական՝ զունայն քար շումն⁴ առանց տեսականի : — իսկ տեսումն՝ որովք արշիմքն ըստ տեսողականին՝ յունայն քարշումն . որպէս 'ի վերայ միլեգնոտացն և ափ շեցեոյցն : Եւ է անմիաբանութիւն նոցա (Ստոյիկեանց) միայն 'ի փոփոխման անուանցն :

Իսկ գործարանք սորա՝ փորուածք խելացն, և որ 'ի նոսա անձնականն օր, և որը 'ի նոցանէ նեարդք խոնաւուտք, անձնականաւն օգոմն, և կազմութիւն զգայարանայն⁵ :

¹) Φανταστικόν, որ է տեսողական զօրութիւն, երեւիստութիւն, զոր և առանգէ անբանական մասն գոչ հոգւոյ . քանզի առանձինն շնչական կենդանութեան է այս գործ : իսկ տեսականն (φανταστών) համեմատի ընդ տեսողականի՝ ըստ որում զգալին ընդ զգայութեան :

²) իմն անբանական մասին հոգւոյ :

³) Տեսութիւն (φαντασία), տեսումն (φάντασμα) .

⁴) Φανταστικόν inanem (vocat) distractionem, sine eo, quod sit φανταστόν . — Christian. Frid. Matth.

⁵) Ὁργανα δὲ αὐτοῦ αἱ πρόοδοι τοῦ ἔγκεφαλου κοιλίας, καὶ τὸ ἐν αὐταῖς ψυχικόν

Իսկ են զգայարանը հինգ, բայց զգայութիւն մի, անձնականն ճաշալուսն 'ի ձեռն զգայարանացն զեղեայսն 'ի նոսա կիրս: Եւ երկրատեսակագունին և մարմնականագունին զգայարանացն՝ որ է շօշափելիքն, զերկրատեսակն զընութիւն զգայ. իսկ ճաճանչատեսակուն՝ որ է տեսանելիք, զճաճանչատեսականն. որպէս և օգտատեսական՝ զօգոյն կիրս, քանզի օգ է ձայնի էութիւն կամ 'ի յօդ բախումն. և սպինգատեսական և ջրատեսական՝ զճաշակումն հիւթոյն ընդունի. քանզի 'ի զգալեացն 'ի ձեռն իւրոյն ճանաչել ընտարեցաւ¹:

Արդ՝ պարտ էր ըստ այսմբանի, վասն զի չորք են տարերք՝ չորս գոլ և զգայարանսն. այլ վասն զի չորի և հոտոցն սեռ՝ ընութեամբ է 'ի միջի օդոյ և ջրոյ, քանզի յօդոյ է թանձրամասնագոյն, իսկ 'ի ջրոյ անօսրամասնագոյն, (յայտնի լինի այսպիսիս 'ի ձեռն ախտիցն ուրն գացն ծանրաշնչութեան, քանզի և նոքա [ախտացեալքն շնչունք] թէ և քարշեն զօգս 'ի ձեռն շնչոյն, սակայն 'ի քարշեն զնա՝ հոտոցն ոչինչ զգան. քանզի խցեալ թանձրագունին, ոչ անցանէ 'ի զգայութիւնն), այսորիկ սակա հինգերորդ զգայարան՝ հոտոտելիքս գտանի 'ի բնութենէն. զի մի ինչ՝ յորոց կարն է 'ի գիտութիւն գալ՝ զերծցի զգայութենէն:

Եւ է զգայութիւն ոչ այլայլումն, այլ գիտութիւն այլայլման, քանզի ոչ այլայլին զգայարանքս, բայց տարորոյէ զայլայլումն՝ զգայութիւնն:

Եւ կոչի յոլովակի² զգայութիւնն և զգայարանք. և է զգայութիւնն ընդունակ զգալեացս. բայց թուի այս սահմանն՝ ոչ սորա գոլ զգայութեանցս, այլ գործեաց սորա. վասն որոյ և այսպէս սահմանեն զգալութիւնն. Հոգի իմանալի, յիշխանականէն՝ 'ի գործարանս կոյս կարգեալ. եւ է այսպէս զօրութիւն անձին՝ ընդունական զգալեացս. իսկ զգայարանք՝ գործարանն ընդունելութեան զգալեացս³:

Բայց Պշատոն ասէ զզգայութիւնն՝ անձին և մարմնոյ կցորդութիւն առ արտաքոյսն. քանզի զօրութիւնն՝ անձին, և գործարանն՝ մարմնոյ⁴, և

πνεῦμα, καὶ τὰ ἐξ αὐτῶν νεῦρα, τὰ διὰ βροχῶ τῶ ψυχικῶ πνεύματι, καὶ ἡ κατασκευὴ τῶν αἰσθητηρίων. — [Ժմմ. Փորուած խեղացն՝ որ 'ի ճակատն, և անձնական օգն, այսինքն՝ շնչական կենդանութիւնն, և խոնուուտ նիարգն, այսինքն՝ խելապատակքն և ջրաուտ (?) ճանապարհն 'ի զգայութիւնսն:

¹) Այսպէս խառնակ և խրթին յամենայն օրինակս մեր: Ըստ յունին իմանալի է. Ամենայն զգալի իրաց սահմանեցաւ 'ի բնէ յատուկ իմն գործարանն՝ պատշաճաւոր առ մի մի 'ի նոցանէ՝ առ 'ի լինել զգալի:

²) Իմա՝ փոխանակաւ կամ իբրև հոմանիշ իբրեաց:

³) Խրթին են իմաստքն յունաբանութեամբ մթազնեալ, Կոմի ասել ըստ յոյն բնագրին, զի է մարմն ասել զզգայութիւնն կարողութիւն իմն հոգւոյ, ընդունական զգալեաց. իսկ գործարանք զգայութեանն՝ միջնորդք են կարգեալ հոգւոյ առ ընդունելութիւն զգալեաց:

⁴) Իմա անձին է սեփական... մարմնոյ է սեփական:

երկրորդին 'ի ձեռն տեսութեան իմն՝ ընդունական որոց արտաքուստ են։
 Իսկ յոնձնականացն են ինչ՝ որ սպասաւորականք են և ընծայա-
 բերք, և են ինչ՝ որ պետականք և իշխանականք։ Պետականք՝ իմացո-
 ղականն և մակացողականն, իսկ սպասաւորականք՝ զգայականքն,
 և ըստ յարձակմանն շարժութիւն և ձայնականն։ Քանզի և շարժու-
 թիւնք և ձայնք սուրք են, և զրեթէ անժամանակաբար հնազանդին
 կամաց խորհրդոյն։ Քանզի համանգամայն և անդէն կամիմք՝ և շար-
 ժիմք, ոչ ինչ կարօտք եղեալք 'ի միջի ժամանակի կամեւոյն և շարժու-
 թեան։ որպէս 'ի վերոյ շարժութեան մատանցս է տեսանել։ Եւ 'ի
 բնաւորականացն՝ ոմանք ընդ իշխանութեամբ են իմացողականին, որ-
 պէս կոչեցեալքն կիրք։

Գ Լ Ո Ւ Խ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ

Յաղագս Երեսաց

Երեսք հոմանունակի ասին¹, քանզի է և՛ զգայորան և՛ զօրու-
 թիւն զգայականին։ իսկ իպպարքոս ասէ, ճառագայթս յաշտցն ձը-
 գեալք որքան հասանէ՝ որպէս ձեռաց շօշափմամբ մերձեալ յարտաքոյ-
 սն մարմինս, զընդունողականութիւն նոցա առ տեսողականն տալ։
 Իսկ երկրաչափողքն կոնոս² իմն վերագրեն՝ յանկմանէ ճառագայթիցն
 եղեալս, յարտաքս առաքելոցն 'ի ձեռն աչացն։ Քանզի առաքեալ
 ճառագայթս ալոյ ական 'ի ձախ կոյս, իսկ ձախուն յաշկոյս, և 'ի յանգ-
 մանէն նոցա կատարիլ կոնոսն։ ուստի համանգամայն զբազմօք ինչ
 զիրկս արկանել երեսացն, բայց տեսանել ստիւգապէս զայն՝ ուրանօր
 անգանին ճառագայթքն։ քանզի այսպէս յոլովակի հայելով 'ի գե-
 տին՝ ոչ տեսանելք զանկեալն 'ի վայր դահեկան՝ բազում՝ անգամ հա-
 յելով, մինչև բախումն ճառագայթիցն յայնմ տեղուլ լինիցին՝ ուրա-
 նօր դահեկանն, և յայնժամ տեսութեամբն անգանիմք 'ի նա, որ-
 պէս թէ 'ի սկզբանէն սկսաք հայել։

Իսկ Եպիկուրեանքն՝ ուրուականս իմն պատկեր երևեցելոցն անկա-
 նել յաշն։ իսկ Արիստոտելս՝ ոչ մարմնական ուրուական, այլ որա-
 կութիւն 'ի ձեռն այլալման յօդոյն, որ չուրջ յերևելացն մինչև յե-
 րեսն լինել։ իսկ Պլատոն, ըստ ճառանչակցութեան՝ է ինչ որ յաշաց
 լուսոյ այսքան ինչ հոսեցելոյ 'ի նմանասեռն օդ, և է ինչ՝ որ 'ի մար-

¹) Աստ (ճարգմանիլն) Երեսք զնէ 'ի հայումն՝ փոխանակ յունական օֆֆֆ բառի,
 որ արգարե զերկուսն ևս նշանակէ, այսինքն և՛ զաշս և՛ զզօրութիւն տեսանելոյ։ —
 Լաւադոյն լինէր 'ի հայումն ասել տեսողութիւն, որ հոմանունակի զերկուսն ևս իմաս-
 տըս բերէ լինեան։ զի երեսք սովորաբար համանիլ զիմաց կամ՝ մակերևութիւն լսի։

²) Այս է՝ կոնսմէս, բրգաձևս։

մնոց բերեցեղց, և է ինչ՝ որ 'ի միջի օգն զիւրահեղ գոլով զիւրափոխ՝
յարձակեցելոյ ընդ երեսացն՝:

Իսկ Գաղիանոս համաձայնապէս Պղատոնի՝ յաղագս երեսաց, յեւթ-
ներորդումն համաձայնութեան (գրոց) գրելով՝ ասէ այսպէս. Ձի թէ
յակն մտանէր մասն ինչ կամ զօրութիւն կամ պատկեր ուրուական
կամ որակութիւն երևեցելոցն մարմնոց, ոչ արդեօք զտեսցելոցն
մեծութիւն գիտէաք, որպէս զլերին կամ զորմոյ մեծի. քանզի այս-
քան պատկերի անկանիլ յայս մեր՝ ամենայն ամեննին անբան է.
այլ սակայն և ոգին տեսանողական ոչ կարէ այսքան զօրութիւն առ-
նուլ՝ որպէս զի հեղանիլ ամենայն ուրեք յերեսայն: Արդ, ասելի է՝
շուրջ զմեզ զօգս՝ իննել այսպիսիս 'ի գործարան մեզ՝ ըստ որում ժա-
մանակի տեսանեմք, որպիսի է 'ի մարմնիս մերում երակք տեսողա-
կան. քանզի այսպիսի ինչ կրեւտվորեաց շուրջ զմեզ օգս: Ձի ճաճանչ
արեգական հեղեալ 'ի վերինն կոյս օդոյս՝ թափանցիկ լինի բոլորն զօ-
րութիւն: Իսկ 'ի ձեռն տեսանողականացն երակացն ճաճանչ բերեալ,
վասն զի ունի զէութիւն հոգեւորական¹. անկանելով յոր շուրջն զիւր՝
յօդ, և առաջնով արկմամբն զայլալլումն գործեալ, թափանցիկ լինի
մինչև ցբագում ինչ՝ մերձ յինքն, մինչև անկցի 'ի մարմին ընդգիմա-
տիս: Քանզի լինի օդ գործարան ական առ 'ի տեսցելոցն զիսութիւն,
այսպիսի՝ որպէս են խելացն լուսերակքն, որպէս զի զոր ինչ բան ու-
նին խելքն առ երակն, այսպիսի ինչ ունեւ ական առ օդս, անձնաւո-
րեալ յարեգականայնոյն ճաճանչէ՝². Իսկ զի բնաւորեցաւ օդս հպիցն
'ի նա մարմնոց նմանակից լինել, յայտ է, 'ի շիկէ իմեքէ կամ 'ի կա-
պուտակէ և յարծաթոյ պայծառէ՝ անցեալ առ լուսով այլալլիլ օդոյն:

Իսկ Պորփիրիոս յորում՝ Յաղագս զգայութեան, ոչ կոնսն և ոչ պատ-
կեր ուրուական և ոչ նորին անձինն հանդիպեալ երևեւելոցն (ասէ),
գիտել զինքն գոլ զերևելիսս, անձինն շարունակելով զամենայն էսս
և գոլ ամենայնի անձն շարունակելով մարմինս պէսպէս. քանզի ա-
խորժելով գոլ ամենեցունց անձն բանական՝ վայելաբար ասէ ճանա-
չել զինքն ամենայն յէսս³:

¹) Իմս օդային: Կամ ասել ըստ յունին՝ զի որպէս լոյս արեգական թափ անցեալ
ընդ վերին կողմն օդոյ, ընդ բովանդակ թանձրութիւն օդոյն զգօրութիւն լուսոյն հա-
տուցանէ, այսպէս և լոյսն՝ որ հեղեալ սփռի ընդ տեսողական երակունս՝ օդային իմն
ունի բնութիւն, և 'ի հանգիպել անդ օդոյ՝ առաջին բախմամբն ընդհարեալ միտ 'ի նոյն
և յեզափոխէ, մինչև հասեալ զկայ առնու առ մարմին ինչ խափանաբար ընթացիցն:

²) 'Εψυχωμένον υπό της ἡλιακῆς αὐγῆς.

³) Յունաբանութեամբ խրթին և անիմանալի մեան միտք բանին: Ըստ բնադրին
արդեղի են իմաստքն այսպէս. Պորփիրիոս համարի զի հոգին՝ 'ի յարաբերութեան անդ
իրաց տեսանելեաց՝ ինքն զանձն իւր ցուցանէ 'ի նոսին, որք և ոչ այլ ինչ են բայց եւթէ
նոյն ինքն հոգին. քանզի հոգին զայստիկ զամենեւեան յինքեան բովանդակէ. և որ
կանս համանգամայն հոգի է՝ յինքեան ունեւով զամենայն աղգս մարմնոց: Եւ զի մի

Էլ տեսանեն երեսը զբոս ուղի՝ զծիցն, բայց զգայ ըստ առաջնու մըն բանին զգոյնան, ընդ նմին գիտէ և զգունեալն մարմին և զձնն, և զտեղին ուրանոր են, և զմեկուսութիւն և զթիւն, զկայս և զշարժութիւն, զխոշորն և զլոյսին, զհարթն և զանհարթն, զսուրն և զբութն, և զհաստունն՝ եթէ ջրատեսակ իցէ, եթէ երկրատեսակ, իբր զխոնավութեամբ զշոր: Արդ, իւրն նորա (տեսաւնելիաց¹) զգալի է գոյնն. քանզի ի ձեռն տեսութեանն զգոյնան ընդունի, և անդէն ընդ գունն ինքն և գունեալն մարմին, և զտեղին ուրանոր են երեւալ և զմեկուսութիւնն ի միջի տեսողին և երեւցելոյն. քանզի որքանեաց ի զգայութեանցս երկի մարմին, սոցունց անդէն և տեղին ճանաչի, որպէս շօշա. փոխադ և ճաշակեւեաց. այլ սորա յայնժամ միայն՝ յորժամ մերձին ի մարմինն՝ զգան, բայց երեսը և ի հեռուստ ընդունին զիւրան զգալիս. հարկաւորապէս հետեւեաց և միայնոյ (եղևուց) տեսանել զմեկուսութիւնն. բայց զմեծութիւնն յայնժամ միայն գիտէ՝ յորժամ զերեւցելոյն բուռն հարկանել կարիցէ: Իսկ եթէ մեծ իցէ երեւալն՝ ոչ ըստ միանգամ բուռն հարկանելոյ, այլ աստանոր կարօտին երեսը՝ և յիշելոյ և իմանալոյ. քանզի ըստ մասին տեսեալ զնո և ոչ միով զբոլորն՝ հարկաւորապէս յալլմէ յալլ անցումէ. և յոր անկանին միշտ՝ ըստ անցանելոյն զգալի է. իսկ զոր յառաջագոյն ետես՝ յիշումն պահէ. բայց ժողովէ զերկուսին իմացումն, և զգալին և զյիշելին: Արդ՝ զմեծութիւնն երկակի ընդունի (տեսողութիւն). երբեմն միայն, և երբեմն յիշմամբ և իմացմամբ: Բայց զթիւ երեւցելոյն ի վեր քան զերիս կամ զշորս՝ ըստ միանգամ ոչ երեւցելոյ, և շարժութեանցն, և ձեւոցն բազմանպիւնեացն, ոչ երբեք միայն՝ այլ յիշմամբն և իմացմամբ. զի և ոչ կարէ իսկ զհինգն և զվեցն և զեւթն և զթաղումն առանց յիշման ժողովել. այսպէս և ոչ զվեցանկիւնիսն և զութանկիւնիս և զբազմանգիւնիսն:

Չձև և զշարժութիւնս ըստ փոխանցութեան եղեալ (գիտեմք). է ինչ՝ որ նախկին ունի, և է ինչ՝ որ երկրորդն. իսկ ուրանոր նախկինն է և երկրորդն և երրորդն, զայս՝ յիշումն միայն պահէ, իսկ վերինն և ներքին, և անհաւասարն և հաւասար, նոյնպէս խոշորն և ողորկն, և սուրն և բութ, հասարակաց է շօշափելեաց և տեսանելեաց. վասն զի և միայն գիտեն զտեղին², բայց պէտս ունին և իմացմանն. քանզի այն՝ որ միանգամ անկանին ընդ զգայութեամբ, միայնոյ զգայութեան գործ է. իսկ որ բազում անգամն՝ ոչ միայնոյ, այլ և յիշման հանդերձ և իմացմամբն, որպէս յառաջագոյնն ցուցաւ:

Փակ կարգէ հոգի (Փորփիւ) ամենայն էլիս, իրաւամբք ուրեմն հաւաստէ հոգւոյ՝ յաւանայն տեսանելիս՝ զանձն կամ զինքնութիւն իւր տեսանել:

¹) Համառօտ փակագծեալքդ նօսրադիր՝ առ ի մէնջ յաւելումն ուրեք ուրեք, ի պարզութիւն խրժնութեան բանիցն:

²) Έπειθή και μόνα τόν τόπον διαγωνίσκουσι.

իսկ ընդ թափանցիկան մինչև ցխորութիւնն բնաւորեցան անցանել երեսք. նախ ընդ օդ և գեղեցկապէս, քանզի ընդ բոլորն յինի թափանցիկ. իսկ երկրորդ ընդ ջուր՝ ի գաղարման և ի մաքրութեան, զձկուն սըն ի լուզել տեսանեմք. իսկ նուաստ՝ ընդ ապակի և ընդ այսպիսիս, յայտ է, զի ընդ լուսաւորան¹. քանզի է և այս նորա իւր:

Եւ մի պատրեսցէ զմանա՝ զի և ջերմոյն ընդունակութիւն երեսաց է. զի զհօր տեսանելով՝ գիտեմք անդէն թէ և ջերմ է. քանզի թէ յառաջին հանցես զբանդ, դողես թէ և յայնժամ յորժամ նախ տեսին երեսքն զհօրն՝ միայն գունոյն և ձևոյն եղև ընդունակ, իսկ մեր ձեռք և շօշափմամբ՝ ծանեալք թէ և ջերմ է. զոր պահեսց յիշումն առեալ ի շօշափմանէն: Արդ՝ այժմ յորժամ տեսանեմք զհօր՝ ոչ այլ ինչ տեսանեմք քան թէ զձևն և զգոյն հրոյն. իսկ իմացումն յինքն ընդ նմին ընդունին զերևեցելոյն՝ ի ձգունն յիշմանն և զլերմութիւնն. նոյն բան է և ի վերայ խնձորոյ². քանզի ոչ թէ միայն ի գունոյն և ի ձևէ տեսականայ խնձոր, այլ և ի հոտոյն և ի ճաշակմանն որակութենէ. ոչ և զայստիկ տեսութեան ընկալեալ՝ գիտէ թէ խնձոր է, այլ անձն՝ յիշմամբն ամբողջ պահէ՝ զոր ի հոտոյն և ի ճաշակմանէն. համանգամայն ընդ տեսանելն իմանայ և զայս ընդ ձևոյն և ընդ գունոյն: Արդ՝ յորժամ դեղին խնձոր՝ տեսանեմք և համարեմք կարմիր գոլ զնա, ոչ երեսքն են՝ որ պատրինն, այլ իմացումն. քանզի երեսքս յիւրան զգալիս ոչ սխալեաց, զի և զգոյնն և զձևն հոտես:

Արդ՝ երեք ի զգայարանացս, երեսք և լսելիք և հոտոտելիք, զորս արտաբան և ոչ հպեալան՝ ընդունին միջնորդութեամբ օգոյս. բայց ճաշակելիք ոչ զգայ այլազգ եթէ ոչ շաղեսցի ընդ զգալոյն. իսկ շօշափելիք՝ և երկրորդիւ, քանզի և հպեալ ի մարմինս, և միջնորդիւ երեք, (որպէս օրինակ իմն³) գաւազանաւ, էրբեմն երեսք և վկայութեան պէտս ունին այլոց զգոյարանացս, յորժամ երևեալն ճարտարութեամբն ինչ իցէ առ պատրանս. որպէս ի վերայ գծականին. քանզի գծականի դործ է պատրել զերեսս, ոչ գոլով բարձր ինչ կամ խոնարհ, և կամ թէ իրն այսպիսի ինչ ունիցի բնութիւն, ուրանօր պէտք են առ գիտութիւն մանաւանդ շօշափելեաց. է երեքք զի և ճաշակելեացն կամ հոտոտելեաց, որպէս ի վերայ դեղին⁴ խնձորոյն:

1) Այսինքն է, ընդ ապակի և ընդ նմանիս նմին՝ նուազ քան ընդ այլ մարմինս թափանցանէ տեսողութիւնն. յայտ է՝ յորժամ լուսաւորեալ իցեն մարմինքն. քանզի և այս իսկ է նորա բնութեանն սեփական:

2) Յայտ է ընդ անուամբ խնձորոյ՝ զամենայն տեսակս սլաղոց առհասարակ կոչմամբ իմանալ կամք:

3) Յայնքն գնէ χήρον μῆλον, որ է մոմեղէն խնձոր, և համարեմք ձկնարիտ (αἰχμῶν) գոլ գնա, և այլն:

4) Փոխազօծեալք յաւելաւ առ ի մէնք ի գիւրութիւն իմացուածոյ:

5) Նոյն տարաձայնութիւն ընդ քնազրին և աստանօր, զոր սուղ ի վերայ տեսաք. գուցէ թարգմանչին առեալ զխնութիւն մոմոյն փոխանակ որակութեանն:

Իսկ երբեմն և ինքն ըստ ինքեան յայտնապէս յանդիման կացուցանէ զերեւալն, յորժամ ոչ 'ի հեռուստ տեսանէ. քանզի զաշտարակ չորեքանկիւնի՝ բոլոր տեսանէ 'ի հեռուստ. սխալէ և յորժամ ընդ շամանդաղ ինչ կամ ընդ ծուխ տեսանեմք, և կամ ընդ այլ ինչ որ հուսոյ պղտորէ զտեսանելիսն. նմանապէս և յորժամ 'ի ջուրն, քանզի և 'ի ծովու՝ զթիակ նաւին բեկեալ տեսանէ. նոյնպէս և յորժամ ընդ թափանցիկ նիւթոյ հայի, սրպէս 'ի հայելիս կամ յապակիս կամ յայլ ինչ այսպիսեացս. կամ յորժամ ստէպ չարժեսցի երեւեալն, քանզի ամբօխէ զտեսանելիսն փութանակի շարժութիւնն, որպէս զի զոչ բոլորն՝ բոլորեցուցանել, և որպէս 'ի կայս՝ զշարժութիւնն¹. կամ յորժամ մտածութիւնքն յայլ ինչ զբաղիցին, որպէս յորժամ խօսիցի² որ ընդ սիրելոյ՝ թէ և խօսիցի՝ զանց առնէ զնովու վասն մտածութեանցն նորտ առ այլս ինչ գոլոյ. ոչ է և ոչ այս փաստ երեսաց, այլ մտադ. քանզինա ետես և պտտմեաց, բայց միտքն ոչ զգուշացան պտտեցելումն:

Չորից պէտք են առ 'ի հաւաստի գիտութիւն երեսաց, առողջ զգայարանի, չափաւոր շարժութեան, և մեկուսութեան, օդոյ մաքրի և պայծառի:

Գ Լ Ո Ւ Խ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ

Յաղագս Շօշափողակահին:

Ձիւրաքանչիւր որ յայլոցն զգայարանացն՝ կրկին կազմեաց Արարչագործն, և տեղեալ իւրիք և մասնկամբք մարմնոյ պարագրեաց. քանզի և աչս երկուս և անկանջն երկուս և երկուս վտառս զգայութեանց ուրնգոցն արար. և լեզուս երկուս բնատրեայ՝ ամենայն կենդանեացըս, ոմանց անջատաբար՝ որպէս օձից, իսկ ոմանց միաւորեալս և միացեալս՝ որպէս մարդկան. վասն այսորիկ և երկուս միայն փորուածս խելացն զառաջնեալ արար, զի յիւրաքանչիւր փորուած է զգայական. քըն երակբ արձակեալք՝ կրկին առնեն զզգայարանն, և կրկին արար զնոսա՝ վասն գերազանցեալ հոգաբարձութեանն. զի թէ մին կրեսցէ ինչ, միւսն ամբողջ պահեսցէ զզգայութիւնն:

Այլ բազմացն զգայարանացն ապականեցելոց, ոչ ինչ 'ի նոյն կենդանութիւնն փաստի կենդանին. բայց թէ շօշափելիքն լուծցին, ընդ նմին կորնչի և կենդանին. քանզի միայն շօշափելիքն 'ի զգայարանացն՝ են հասարակաց ամենայն կենդանեաց. զի ամենայն կենդանի շօշափելիս ունի, և զայլսն զգայութիւնն՝ ոչ զամենայն ամենայնք, այլ ու

¹) Այսինքն, զերս որ 'ի շարժման կան՝ 'ի հանդարտութեան:

²) Յայնն ունի. Որպէս յորժամ հանդիպեալ ուրուք բարեկամի, թէ և տեսանիցէ զնա, այլ իբր շուեսեալ զանց զնովաւ առնիցէ:

մանք՝ զօմանս, իսկ զամենայն՝ ունին կատարելագոյնքն: Արդ՝ վասն այսու վտանգեցաւ կենդանին՝ կենդանի գոլ կամ ոչ գոլ, ոչ մի մասն վիճակեցոյց Արարչագործն՝ ի շօշափելիսն¹, այլ գրեթէ զամենայն մարմինն կենդանոյն. բաց յոսկերաց և յեղնգանց և յեղջերաց, շաղկապաց և ի մազից, և յայլոց այսպիսեացս, ամենայն մասն մարմնոյ՝ զգայութիւն ընդունի: Արդ՝ պատահեաց իւրաքանչիւր ումեք ի զգալարանացս՝ կրկին ունել զգայութիւնս, և ինչ՝ որ իւրոյն զգալեաց, և և ինչ՝ որ շօշափելեացն. որպէս երեսք, քանզի և զգոյնսն որոշէ, և զլերմն և զցուրտն ընդունի. այլ զայսոսիկ որպէս զմարմինս. իսկ զգոյնսն՝ որպէս երեսք. նոյնպէս և ճաշակելիք և հոտոտելիք և լըսելիք:

Արդ՝ զհարգ ամենայն մարմինն է շօշափելիք, եթէ ի խելացն փութաժէ ասեմք գոլ զզգայութիւնսն. ոչ, յայտ է թէ ի յերակացն ինչ ձգելոցն ի խելացն և սփռելոցն, յամենայն անդամս մարմնոյն՝ շօշափելեացն զգայութիւն աւելին: Իսկ վասն զի յուրվակի փշոյ հարելոյ յոտն՝ անդէն ցհեր զլիսոյ քստմնիմք, կարծեցին ոմանք զկիրան կամ զգայութիւն կրից ի խելսն առաքիլ և այնպէս զգալ. այլ թէ էր ճմարիտ այս բան, ոչ արդեօք խօթանայր վիրաւորեալն անդամ, այլ խելքն: Արդ, լաւագոյն է ասելն՝ եթէ երակքն ի խելքն են, քանզի մասն ինչ է խելացն, յամենայնի ունելով զանձնականն իւր ոգի. որպէս և երկաթ ջնեռալ՝ ունի զհուր: Վասն այսորիկ ուրանօր երակ զգայական է, այն մասն զգայութեան ի նմանէ հաղորդի և լինի զգալական: Ոչինչ է թերևս անտեղի ասել ի սկիզբն երակացն ի խելսն առաքել՝ ոչ զկիրան, այլ զգայակցութիւն իմն և զեկեղեցումն կրիցն:

Եւ է իւր զգալի շօշափելեացն՝ ջերմն և ցուրտ, փափուկն և խիստն, խոշորն և ողորկն, ծանր և թեթեւն. քանզի և միայն ի ձեռն շօշափելեացն ճանաչին այսորիկ: Իսկ հասարակաց տեսանելեաց և շօշափելեացն՝ սուրն և բուլթն, խոշորն և ողորկն, չորն և խոնավուտն, թանձրն և անօսն, ի վերն և ի վայրն, որպէս և տեղին և մեծութիւն՝ յորժամ իցէ այսպիսի՝ որպէս զի ըստ միանգամ հարկանելոյ բուռն շօշափելեացն. և խիստն և անգայտն, և բոլորն՝ յորժամ իցէ փոքր, որպէս և այլ ինչ ձև: Նոյնպէս և շարժութիւն մարմնոյ հպեալ ի նա՝ զգայ, հանդերձ յիշմամբ և իմացմամբ. այսպէս և զթիւ, այլ մինչև ցերկուս և ցերիս, և այսոցիկ՝ փոքունց և զիւրաւ բուռն հարկանելեացն: Յաւէտ քան զշօշափելիս՝ երեսքն ընդունին զայս. որպէս զհաւասարն և զանհաւասարն, զի սեռ է ողորկին և խոշորին. քանզի խրտուլութիւն ընդ անհաւասարութեան խառնեալ խոշորութիւն առնէ. իսկ հաւասարութիւն ընդ խտուլութեան՝ ողորկութիւն:

¹) Այսինքն է. Եւ քանզի զայսմանէ (զգործարանէ շօշափման) կախեալ կայ կենդանութիւն և կամ մահ կենդանոյն, ուստի ոչ միոյ մասին և եթ միշակեցոյց զայն, այլ ընդ համբնէն մարմինն սփռեաց զայս կարողութիւն:

Արդ յայտ է յասացելոցս՝ թէ բազում հասարակորդութիւն ունին զգայութիւնքս այսօրիկ առ միմեանս . քանզի զմիոյն զսխալանսն միւսն յայտնէ . զի՝ի վերայ նկարագրութեան¹ երեսք՝ բարձրութիւնս իմն տեսանեն ուղղանց և այլոց անդամոց . բայց շօշափելեացն հպեալ, յանդիմանէ զյանցումն նորա . որպէս երեսք միշտ և հանապազ ՚ի ձեռն միջնորդութեան օդոյս տեսանէ, այսպէս և շօշափելիք ՚ի ձեռն միջնորդութեան գաւազանի զգալ զխնստս և զկակուղս և զխոնաւուտըս, այլ բանաւորապէս և իմացմամբ : Քանզի ստուգագոյնս ունի զայս զգայութիւն մարդ . զի զայս և զճաշակելիս՝ առաւել ունի քան զայլ լոցն կենդանեաց . թէ և այլով իւրք տրուպ է . քանզի այլ կենդանի ըստ այլ զգայութեանց յերկնի² առաւել է քան զմարդն . բայց շուն՝ երկւքն համանգամայն . քանզի սրագոյնս և՛ լսէ և՛ տեսունէ և՛ հոտ առնու, որպէս և յայտ է ՚ի հետ վարելոյն³ շանց :

Եւ ամենայն մարմին շօշափման է զգայարան, որպէս յառաջագոյն ասացաւ՝ մանաւանդ ձեռաց ներքինն կոյս, և սոցա և յաւէտ ծայրք մատանցն . քանզի այսրքիկ որպէս գիտակից ճշմարիտ են շօշափմանն . քանզի ոչ միայն ընդունական գործարան կազմեաց Արարչագործն զձեռս, այլ և շօշափական . վասն այսորիկ և զմորթն նրբագոյն ունին, և զնդերս ՚ի ներքուստ կուսէ կազմալս և անմասն ՚ի մագէ, զի յաւէտ սննդին զշօշափմանն . իսկ մագ ոչ բուսանելոյն ՚ի նոսա՝ զնդերս քըն եղեն պատճառք : Իսկ ձեռաց են ինչ որ խտագոյնք են՝ առ ՚ի յօդնութիւն հզօրագոյնք⁴, և են ինչ որ փափկագոյնք՝ առ շօշափումն ստուգագոյնք . որպէս և ջրաց՝ են ինչ որ խտագոյնք են՝ առ ՚ի շարժութիւն, և են ինչ որ կակուղք՝ առ ՚ի զգայութիւնն պատեհագոյնք . քանզի այսոքիկ (չիլք) սոցունց շօշափելեացս են գործարանք, զի ՚ի ձեռն այսոցիկ ինի զգայութիւն շօշափելեացս :

ՓԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Յաղազս ճաշակելեաց :

Յաղազս երեսաց՝ յառաջագոյն ասացաք ըստ ուղիղ գծից տեսանել . իսկ հոտոտելիք և լսելիք՝ ոչ ըստ ուղիղ գծից միայն, այլ ամենայն ուստեք . բայց շօշափելիք և ճաշակելիք՝ ոչ ըստ ուղիղ գծից և ոչ ամենայն ուստեք ճանաչեն, այլ յայնժամ միայն՝ յորժամ ինքեանք հպին յիւրեանցն զգալիսս, բաց յորոշեցելոցն :

1) Իժն՝ ՚ի վերայ պատեհերի նկարելոյ գեղովք :

2) Ան է՝ երկց այլոց զգայութեանց, տեսանելեաց, լսելեաց և հոտոտելեաց :

3) 'Ex tunc i'xusson'et'et' xusson, այն է՝ ՚ի հետագօտոց շանց :

4) Յոյնն ունի մեկին . Եւ ձեռք որ հզօրագոյնք են՝ առաւել զգայունք ՚ի շօշափման :

Եւ են ճաշակելիք՝ հիւթոցն ընդունակք . և գործարան նորա՝ լեզու . և ծայրնորա առաւելագոյն , և ևս հանդերձ պստղիւք՝ վերնատունքն¹, յորս է 'ի խելացըն² բերեալ երակք ընդարձակեալք, և պատմին զեղեալն ընդունելութիւն առ իշխանականն (նոզի) : Իսկ հիւթոցն ճաշակականքն կոչեցեալք որակութիւնք՝ են այստիկ , քաղցրութիւն , սրութիւն , կծուութիւն , թթուութիւն , խստութիւն և դառնութիւն , ազուութիւն , գիրութիւն³ . այսոցիկ են ճաշակելիք գիտողականք , ըստ այսոցիկ որակութեանց և ջուրն անորակ⁴ ասի , և ոչ մի յայցցանէ երեւցուցանելով 'ի ճաշակմանն՝ որակութիւն . քանզի ըստ այլոցն , իբր՝ ցրտութեան և յորս է խոնաւութեան , բնաւորակից ունի զորակութիւնսն : Բայց թթուութիւն և խստութիւն՝ յաւէտն և 'նուազն թթու՝ տարբերին 'ի միմեանց :

Արդ՝ պարզքն ճաշակականք որակութիւնք գրեթէ՝ պստղիկ միայն են , բայց չարադրութեամբ բիւրք . քանզի ըստ իւրաքանչիւր տեսակի կենդանւոյ և տնկոյ՝ առանձինն որակութիւնք են : Այլազգ ընդունիմք 'ի ճաշակմանն զխոզենւոյն որակութիւն , և այլազգ զլոբիցն մսոյ . և այս ոչ արդեօք էր՝ եթէ ոչ էր վանազանութիւն իւրաքանչիւր ճաշակմանցն որակութեանց . ուստի ոչ դք արդեօք զսոսա ըստ ազգի կարէր ունիլ , բազումս գոլով և ամենայն իրօք 'ի միմեանցն տարբերեալք . քանզի որովք կալեալ լինի մի ինչ 'ի պարզիցն որակութեանց , և այսոցիկ ծանօթ է ըստ տեսակի ճաշակմանցն տարբերութեանց⁵ . զի թզոյ և չամչի և արմաւոյ՝ մի որակութիւն կալեալ լինի՝ քաղցրութիւն , այլ ճաշակումն տարորոշէ զիւրաքանչիւր ուրիշ տարբերութիւն :

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Յաղագս Լսելեաց :

Իսկ լսելիք՝ ձայնից և ճայթմանց են զգայարանք . քանզի ճանաչէ զնոցա սրութիւնն և զժանրութիւն , զողորկութիւնն , և զխոշորութիւնն և զմեծութիւնն⁶ : Եւ գործարան սոցա՝ երակքն որ 'ի խելացն՝ փափուկք , և ականջացն կազմութիւն , և նեարդատեսակքն նոցա սեռքն , որ է պատեհ առ 'ի յընդունելութիւն ձայնից և հնչմանց : Եւ միայն մարդ և կապիկ՝ ոչ շարժէ զականջս յամենայն կենդանեաց :

¹) 'H սπερμα, որ էն քիմք :

²) Խմա յուղեղէն :

³) Le doux, l'acide, l'acerve, l'acre, l'apre, l'amer, le sale, l'onctueux .

⁴) Գորնական մեր՝ անսրար , ուղղեցաւ ըստ յունիի :

⁵) Պարզելի են իմաստքն . Նա զի և յերս անդ՝ յորս անդ՝ քաղցրութեանն սրակութիւն պարզ , 'ի ճաշակման անդ՝ զանազանին յերբաց :

⁶) Լիմն . Զուրն (ձայն) որպէս զալալի , և զժանր՝ որպէս գոմի , զողորկութիւնն՝ որպէս ծովու , և խոշոր՝ որպէս իշոյ :

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍՆԵՐՈՐԴ

Յաղագս Հոտոտելեացն:

Հոտոտելիք լինին 'ի ձեռն ռնգանցն, և թափանցիկ լինի ընդ ա-
մենայն զառաջեալ փորուածս խելացն. քանզի նա շոգետեսակ գո-
լով բնութեամբ զշոգիսն զիւրաւ ընդունի. զի սասացաւ և յառաջա-
գոյն, թէ իւրաքանչիւր ոք 'ի զգայարանացն՝ ըստ նմանութեան իրիք-
և իւրութեան իւրոցն՝ զգալեաց լինի ընդունակ: Սակայն ոչ՝ որպէս
այլոց զգայարանաց երակս զգայականս արձակեաց խելքն՝ այսպէս
և հոտոտելեացն, այլ սա իւրովի ընու զպէտս երակացն և զշոգեացն
զգորութիւն ընդունի:

Իսկ շոգեացն սեռականագոյնն տարբերութիւն է՝ անուշահոտու-
թիւն և ժահահոտութիւն, և միջակն այսոցիկ՝ որ ոչ անուշահոտն է
և ոչ ժահահոտն: Եւ լինի անուշահոտութիւն խոնավութեանցն՝ որ 'ի
մարմինսն ստուգապէս ամօքեցելոց, իսկ միջակ՝ միջինն տրամադրու-
թիւն, իսկ նուաստագոյնն կամ ոչ բնաւն՝ ժահահոտութիւն:

ԱԶԴ. — Դանուցանեմք առ բանասէրս զի յաշորգութիւն գրոցսն չեմքսիտի չրատարակեացի ամ-
բող առանձինն հատորով:

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ

ԱՏՈԼՖ ԲԱՌԻՄԳՅԱՐՏՆԷՐԻ

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ ՊԵՏՈՅԻՑ ԳՐՈՑ ՎՐԱՅ

(Տես էջ 203)

ՄԻՐԻՇ նոր հրատարակութիւն Մ. Խորենացոյ պատմութեան
իբրև քննադատական տպագրութիւն 'ի լոյս եկաւ յամին 1843
'ի Վենետիկ՝ Մովսիսի երկասիրութեանց ամբողջ տպագրութեան մէջ.
և այս տպագրութիւնս, ինչպէս որ Միխիթարեան վանաց գրապետն
Մեծ. Հ. Բառնարաս վ. բերանացի ինձ հաղորդեց, կատարուած է նը-
շանաւոր ճանապարհորդին Մեծ. Հ. Ներսէս Սարգիսեանի հոգատա-
րութեամբ: Արդ յայսմ գործածուած են, (բաց 'ի 1827ի տպագրու-
թեան համար գործածուած ձեռագրէն, ինչպէս նաև 'ի Վենետիկ
գտնուող ՋՄԲ թուականաւ գրուած ձեռագրին Գէորգեան առաջին